ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102 հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե հիմնական պահանջից բացի, ներկայացված են ածանցյալ պահանջներ, որոնք հիմնական պահանջի բավարարման դեպքում ենթակա են անվերապահ բավարարման, ապա ածանցյալ պահանջների համար պետական տուրք չի գանձվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերը և կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածի ա) ենթակետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման, հիմնական պահանջ վերաբերում է նախաորակավորման գնման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի որոշման հետ կապված վեճին, որը չի վերաբերում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին, միաժամանակ՝ այդ փուլում գնման գինը սահմանված կամ հրապարակված չէ, իսկ Հայցվորի կողմից նախապես 100,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումար, Դատարանը եզրահանգում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊ ընկերության ենթակա է բռնագանձման 20,000.00 ՀՀ դրամ՝ որպես սահմանված չափով նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ 80,000.00 ՀՀ դրամի չափով ավել վճարված պետական տուրքի գումարը ՀՀ պետական բյուջեից ենթակա է վերադարձման «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊ ընկերությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԵՄ-ԾՁԲ-24/9» ծածկագրով նախաորակավորման գնման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 5.1-րդ և 5.3-րդ ենթակետերը՝

կապված «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊ ընկերության հայտը մերժելու հետ, անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանքներ «ԴԻ ՋԻ Քոնսալթինգ» ՍՊ ընկերությանը նախաորակավորված մասնակից ճանաչելուն, վերջինիս հրավեր ներկայացնելուն և բանակցությունների հրավիրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԵՄ-ԾՁԲ-24/9» ծածկագրով նախաորակավորման գնման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 5.1-րդ և 5.3-րդ ենթակետերը՝ կապված «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊ ընկերության հայտը մերժելու հետ:

Պարտավորեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը «ԴԻ ՋԻ Քոնսալթինգ» ՍՊ ընկերությանը ճանաչել նախաորակավորված մասնակից՝ վերջինիս հրավեր ներկայացնելով և բանակցությունների հրավիրելով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊ ընկերության բռնագանձել 20,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ պետական բյուջեից «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊ ընկերությանը վերադարձնել 80,000.00 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**